

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

1. «Մուրերիկ» թե՛ «Մուրերիկ»

Վիմագիր աղբյուրները հաճախ կարճառոտ են, արեղավորելու մտահոգությամբ՝ առարկրճարգրությամբ ու անսովոր հապավումներով, բայց միշտ փաստական և իրապատում բովանդակությամբ: Միջնադարյան Նախասրանի քաղաքական, մշակութային և արևմտական պարմությունը մեծապես պարավորված է վիմական արքեգրություններին, այլապես պարմության հարածները շարավելին կլինեն, իսկ մեր ճանաչողության ասարիճանը՝ նշանակելի չավով պայմանական: Նամոզվելու համար կարելի է թերթել «Դիվան հայ վիմագրության» առաջին հարորը, որ ընդգրկում է Անի քաղաքի հայերեն վիմագրությունը: Ն. Մարի հանձնարարությամբ այն կազմել է ակադ. Ն. Օրբելին և խղճմարեն խմբագրել, իսկ հրարարակությունը գլուխ է բերել հայագիարության այդ բնագավառի նվիրյալ սպասավոր Ս. Գ. Բարխուդարյանը (Երևան, 1966):

Նարորի արճանագրությունների լուսանկարների աղյուսակները արագրվել էին 1924 թ. Լենինգրադի ակադեմիական արարանում, իսկ բնագրային շարվածքը գոհ է գնացել ջրհեղեղին, ուսարի կազմողն ու խմբագիրը սարիաված են եղել հրաժարվել կցագրական նմանակության կորած արառճներին և եղած արիարակների վրային (երբեմն էլ առանձին լուսանկարներին) նոր ի նորո գրչանկարներ պարարարել և վերճանություններ սրբագրել: Այս պարագան հաճախ դժվարություններ է հարուցել, մանավանդ առանձին արառարարկերներ ու արառակակցություններ վերարարողելիս: Ուսարի բնավ գարմանալի չէ, որ նորոյա հերագրություններում առանձին արերմիներ կամ անուններ սարուղելիս արարակարճություններ ու ճշգրարումի կարար մեկնարանություններ են լինում: Մասնավորապես այդպիսին է Անիի Ս. Առաքելոց եկեղեցու գավթի արեւելյան պարի հարավային մասում, հյուսիսային խորշի երկու կողերին գրված անավարար արճանագրության գորճածած հարկային արերմիների հասցեագրման խնդիրը: Արճանագրության անդրանիկ վերճանությունն ու Ֆրանսերեն թարգմանությունը կարարել է Կարապետ Բասմաջյանը¹: Գրադարճության ենթարկած նրա վերճանությունն այս է. «Թվին ԶԻԵ(1276): Էլղանին:

Վասն յերկար կենդանութեան փաթշահին և Սա(հ)իր Դիւանին, մեք՝ Անոյ դադմաչիքս, Ննդուչախս, (որ) պարոն դարավորին որդին է, Զար(ա)ին Ուսուփս, Նուարին Գորգ և Բաւլէն, ապրիշմ(ա)գորճ և փռան գդրիկ, գայս գիր արվար Անոյ մուրերկերուն, արեսար որ ուժ իր արած անիրար դադմաճեց, ու եղար արակ: Դրասարլէն կէս Պ առնուին. մեք՝ վերագրեալ դադմաճիքս, վասն յերկար կենդանութեան փաթշահին, թող (ար) »:

Ա. Բասմաջյանը այս արճանագրությունը թարգմանել է Ֆրանսերեն՝ առ այդ կարարե-

1 K. Basmadjian, Les inscriptions arméniennes d'Ani, de Bagnair et de Marmachên, Paris, 1931, p. 89-90: Նախապես լույս է արել «Revue de l'Orient chrétien» հանդեսում:

լով որոշ սրբագրական աշխատանք (Սահիպ-Սահիպ, դադմաչի-դամդաչի, դապավոր-դա-
պատր, ապրիշմգործ-ապրիշմագործ, ավաբ-պուաբ, ուժ իր արած-ոյժ էր առած, դադմա-
ճի-դամդաչի, դրաստ-գրաստ), երկու փերմին՝ *գղրիկ* և *մուրեղներ* անհասկանալի են
մնացել, ավելի ճիշտ առաջինը մնացել է առանց թարգմանության (gdrik), իսկ երկրորդը՝
համարեքսպում ընկալվել է հսկիչ - controleurs (?):

Արձարձվող բնագրի հաղորդումները ուշադրության է առել և նրանում հիշարակվող
անձանց ինքնությունը քննության ենթարկել ճանաչված պարմաբան Ն. Գ. Ժամկոչյանը²:
Սկզբնաղբյուրների լայն ընդգրկմամբ ու համադրական բացառիկ հմուտ քննությամբ նա
պարզել է Սահիպ Դիվանի և Անիի 1263 թ. վիմագրում ներկայացող Սահմադինի ու Քարի-
մապինի փոհմական սերունդը, առնչությունը Անիին ու հայոց մյուս բնակավայրերին, նրանց
գործունեությունն ու ժամանակագրությունը: Ն. Գ. Ժամկոչյանը հաջողությամբ վերանայում
է հիշյալ անձանց հետ կապված Դ. Ալիշանի և Ն. Մանանդյանի նախնական վարկածնե-
րը և հանգում աղբյուրներով սպուգելի եզրակացության, ապա անցնում «դամդաչի»-ների
(հարկահավաքների) ինստիտուտի քննությանը Անիում:

Մեզ զբաղեցնող 1276 թ. Ս. Առաքելոց արձանագրությունը, բնականաբար, ընդգրկված
է նաև Ն. Օրբելու կազմած և Ս. Բարխուդարյանի խմբագրած «Դիվանի...» Ա հատորում (Էջ
22, արձ. թիվ 72), սակայն, ինչպես երևում է, Կ. Բասմաջյանի վերծանությունը ճանաչելով
հանդերձ, «Դիվանի» կազմողը և խմբագիրը գերադասել են VIII փախտակում փայլած լու-
սանկարի հիմամբ ինքնուրույն վերծանություն առաջարկել, որ է այս.

«ԹՎԻՆՆ | ՉԻԵ: | ԷԼՂԱՆԻՆ: | ՎԱՄՆ ՅԵՐԿԱՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՓԱԹՇԱՆԻՆ
ԵՒ ՍԱԽԴԻԴԱՆԻՆ ՄԵՔ ԱՂՆ ԴԱՂՄԱԶԻՔՍ ՆՆԴՈՒԶԱՆՍ ՊԱՐՈՆ ԴԱՏԱՎՈ-
ՐԻՆ ՈՒ ԳԻՆԷՋԱՏԻՆ | ՈՒ ՍՈՒՓԱՆ ՈՒ ԱՄՏԻՆ ԳՈՐԳ ԵՒ ԲԱՄԻՆ ԱՊՐԻՇՄԱԳՈՐԾ
ԵՒ ՓՈԱՆԳ | ՇՐԻԿ ԶԱՅՍ ԳԻՐ ՏՎԱՔ ԱՆՈ ՄՈՒՏԷՐԿԵՐՈՒՄՆ. ՏԵՍԱՔ ՈՐ ՈՒԺ ԷՐ
ԱՐԱՇ ԱՂԻՐԱԲ ԴԱՂՄԱՃԻՑ | ՈՒՆԻ (ՈՒ ՄԻ?) ԴԱՐՏԱԿ ԳՐԱՍՏԵՆ ԿԷՍ ՍՊԻՏԱԿ
ԱՆՆՈՒԻՆ: ՄԵՔ ՎԵՐԱԳՐԵԱՎ ԴԱՂՄԱՃԻՔՍ ՎԱՄՆ ՅԵՐԿԱՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ
ՓԱԹՇԱՆԻՆ ԹՈՂԱՔ...»

Մեր համոզմամբ՝ Կ. Բասմաջյանի առաջարկած վերծանությունը բառանշար-
ման, պրոնունցիան նշանների և իմաստավորման առումով գերադասելի է, սակայն ներկա
ղեկքում խոսքը այդ մանրամասներին չի վերաբերում, այլ արպտնագիր սրացողներին՝
մուրեղներուն կամ *մուրեղներուն*, որոնք ԺԳ դարում միանգամայն փարբեր գործառույթ
են ունեցել Անիում:

Տասնամյակներ առաջ այդ փարբերթեցման խնդրին անդրադարձավ անվանի վիմագ-
րագետ այժմ հանգուցյալ Ս. Ա. Ավագյանը: Նա մերժում է Կ. Բասմաջյանի *մուրեղներուն*
ընթերցումը և հավաստի նկատում Ն. Օրբելու «Դիվանի...» *մուրեղներունը*՝ առ այդ փա-
լով արձանագրության չորս փողի նոր գրչանկար և ասելով, թե «Բնագիրը լավ է պահ-
պանվել, և նրա ընդօրինակությունը դժվարություններ չի հարուցում»³: Ինչ վերաբերում է
«մուրեղիկ» և այսպիսի «մուրեղներուն» արական հոլովածուի իմաստավորմանն ու սպու-

2 Ն. Գ. Ժամկոչյան, Անի քաղաքի ԺԳ դարի երկու արձանագրության մասին, - «Վ.Մ. Մոլոդովի անվան
Երեսանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ», հ. Բ, Եր., 1955, էջ 98-115:

3 Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 218-219:

գաբանությանը, վիճագրագետը այն նույնական է համարում արաբ. *mudarak* = *ժանդարմ, դիպակալ, հսկող* բառ-եզր եւ եզրակացնում. «ըստ այդմ՝ *մուրերիկ* պետք է հասկանալ քաղաքի կամ շուկայի հսկիչ պաշտոնյա, ժանդարմ, ոստիկան»⁴:

Այս ընթերցումն ու նրա մեկնաբանությունը արդարացի չենք նկատում հետևյալ պատճառաբանությամբ.

1. Անիի դամղաչիները պետք է իրենց նախորդների կապարած անիրավությունը եւ *մուրերիկներին* կամ *մուրերիկներին* ազատել կես սալիպակ վճարելու հարկից: Եթե խոսքը *հսկիչ պաշտոնյային, ժանդարմին* կամ *ոստիկանին* վերաբերեր, ապա ստացվում է, որ կապալով հարկահավաքություն ստանձնած պաշտոնյան (դամղաչին) թողնում է մեկ այլ պաշտոնյայից գանձվելիք կես սալիպակ հարկը: Մինչդեռ շուկայի հսկիչը, ոստիկանը կամ ժանդարմը վճարովի պաշտոնյա էր, եւ հարկ կարող էր սահմանվել նրա օգտին՝ իբրեւ վարձավարություն:

2. Եթե պաշտոնյան *մուրերիկն* է, ապա անհասկանալի է «դարպակ գրաստին կես սալիպակ ամուլին» արքահայությունը. ի՞նչ կապ ունի բեռնված կամ դարպակ գրաստը հսկողություն իրականացնող պաշտոնյայի հետ: Ուրեմն հարկ վճարողը գրաստի տերը պետք է լինի, որպիսին է *մուրերիկը*:

Այս կարգի միաձուլումները ամիթ դարձան, որ փողերիս հեղինակը մարենագրական աղբյուրներում երևան բերի «մուրերիկ» տերմինի մի քանի նոր գործածություն, այդ թվում նաեւ իմ վրացերենում, եւ պաշտպանի Կ. Բասմաջյանի առաջարկած ընթերցումը⁵:

Վերջին փաթիլներին Արեւմտյան Հայաստան կապարած ուղեորություններից մեկի ժամանակ մշակութային երևելի գործիչ Զավեն Սարգսյանը եղել էր Անիում եւ մի շարք լուսանկարահանումներ կատարել: Վերադարձին ճարտարապետության թանգարանում Անիի հուշարձանների լուսանկարների ցուցադրություն կազմակերպեց: Յուրանմուշներից մեկը Ս. Առաքելոցի գավթի ճիշտ մեզ հեղաբրբրող խորշն էր ներկայացնում՝ բավական լավ պահպանված արձանագրության ամբողջական ընդգրկմամբ⁶: Վերջապես հնարավորություն ստեղծվեց «Դիվանի» գրչանկարն ու վերձանությունը ստուգելու ըստ լուսանկարի եւ սրբագրելու այն.

«ԹՎԻՆ ԶԻԵ.

ԷԼՂԱՆԻՆ.

ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐ ԿԼԵՆԴԱՆՈՒԹԵ(ԱՆ) ՓԱ-

ԹՇԱՏԻՆ ԵՒ ՍԱԽԴԴԻԲԱՆԻՆ, ՄԵՔ Ա-

ՆՈ ԴԱՂՄԱԶԻՔՄ՝ ՆԵՐՈՒԶԱՄՍ, ՊԱՐ-

ՈՆ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՈՒՂ ԳԻՆԷԶԱՏԻՆ

ՈՒՍՈՒՓՄ¹, ՆՈՒԱՍԻՆ² ԳՈՐԳ ԵՒ ԲԱ-

ԷԼԷՆ³ ԱՊՐԻՇՄ(Ա)ԳՈՐԾ⁴ ԵՒ ՓՈՒՆԳ.

4 Անդ, էջ 221: Անիաժեշտ ենք համարում հիշեցնել, որ շուկայի հսկիչ պաշտոնյան վկայություններում այլ անուն ունի՝ *կոփիչ շուրպա, մոխրասալ*:

5 **Ս. Մ. Мурадян**, *Арабский термин Mukeri в армянских и грузинских источниках*. - «Ձերտեջ Նաջրտու-Յորոսեո լարտեջլոցիւրո Նոմոնոյմոս մանալեյմ», տեղեկոս, 2005, թ. 134-137.

6 Հարգարժան Զ. Սարգսյանը առաջին իսկ դիմումիս հոժարակամությամբ արձագանքեց եւ լուսանկարի այսպիսի հրապարակվող օրինակը տրամադրեց:

ԴՐԻՄՑ՝ ԶԱՅՍ ԳԻՐՍՎԱԶ ԱՆՈ ՄՈՒԷ-
ԷՐԿԵՐՈՒՆՑ՝ ՏԵՍԱԶԻ ՈՐ ՈՒԺ ԷՐ ԱՐԱԾ Ա-
ՆԻՐԱԲ ԴԱՂԱՄԱՃԵՑՈՒՄ՝ Ի ԴԱՐՏԱԿՑ ԳՐԱ-
ՍՏԷՆ ԿԷՍ [ՍՂ(ԻՏԱԿ)]Ց ԱՌՆՈՒԻՆ: ՄԵՔ ՎԵՐԱԳՐ-
ԵԱԼ ԴԱՂԱՄԱՃԻԲՍ | ՎԱՄՆ ՅԵՐԿԱՐ Կ-
ԵՆԴԱՆՈՒԹԵ(ԱՆ)¹⁰ ՓԼԱԹՇԱՏԻՆ ԹՈՂԱԶԷ՝⁷:

Տարրերը քննարկում են ըստ «Դիվանի» հրատ.

**«1 ու Սուփան 2 ու Ամրին 3 Բալան 4 ապրիլմագործ 5 Շրիկ 6 մուրեղներուն
7 դաղմաճից ունի (ու մի?) 8 ի դարպակ | դարպակ 9 սպիտակ | 10 յերկարկենդա-
նութեան»:**

Ուրեմն՝ հակառակ հանգուցյալ բարեկամիս՝ Ս. Ավագյանի արտահայտած վարա-
հության, արձանագրության մեջ *մուրեղներկ* պաշարոնյա չունենք. միանգամայն արդարա-
ցի է եղել Ն. Ժամկոչյանը, երբ հեկտեղ է Կ. Բասմաջյանի ընթերցմանը, բայց ոչ «հսկիչ»
(contrôleur) բացատրությանը: «Այս բառը առաջացած պարբ է լինի,- գրում է նա,- արա-
բերեն «մուրաբին» - «մուրաբուն» բառից, որը նշանակում է «խշապան», «ջորեպան», «իր
գրասարը՝ ձին, ջորին, էշը վարձով փոխող» ... Որ իսկապես մոնոթլական փոխաբերության
ժամանակաշրջանում քաղաք մտնող բեռնված ամեն մի գրասարից հարույկ հարկ է գանձվել,
վկայում է ԺԴ դարի նշանավոր ճանապարհորդ Բաղդուչի Պեղոյությունը»⁸:

Ըստ մեր արձանագրության՝ «կէս սպիտակ» է գանձվել Անիի շրջակայքի գյուղերից
«դարպակ» գրասարով քաղաք վարձու աշխատանքի եկողներից կամ որ նույնն է՝ գրասարը
վարձով փոխողներից, ինչը քաղաքի դամաճիները բնությունն են համարել և «թողել են»:

Այս ոչ մեծ արձանագիր քերտաբը միաժամանակ միջին հայերենն ու Անիի խոսված-
քը ներկայացնող կարեւոր աղբյուրներից է: Նակատակ գրքության կանոնավորությանն ու
վայելչությանը՝ այն հարուստ է արտասանական կենդանի վավերացումներով. *Էրդան* (ի-
խան), *յերկար* (երկար), *փաթշահ* (փափշահ), *սախպ* (սափեր), *Անո* (Անոյ), *դաղմա-
ջիք* (դամաճիք), *Բալ* (Պալ), *ապրիլմագործ* (աբրեշում, մեղաքս), *Դրիկ* (Դերենի-
կի), *փոխար* (փոխար), *մուրեղներուն* (մուրեղներից), *ուժ էր աղած* (ճնշում էր գործադրած),
դարպակ (դարպակ), *առնուին* (առնելին), *վերագրեալ* (վերագրել) և այլն:

Այլ մանրամասնությունների մեջ չմտնելով՝ նկատենք, որ բնագրում կան ևս հնագրական
ինքնաբերականություններ. ԱՐ, ՄԱ, ՆԻ կցագրեր, Ս դիմորոշ հոդի և սպիտակ բառի սկզբնագ-
րի կրկին ընթերցում, առանձին գրերի սրեղների և երեսների համադրում և այլն:

2. «Ձեռագիր նորին ինքեան Գրիգորի Նարեկացու»

Վենետիկի Սխիթարյանց մատենադարանի «Մայր ցուցակի» Զ հարորը կազմելիս Ն.
Սահակ վրդ. Ճեմճեմեանը Ս. Գրիգոր Նարեկացու «Մարեան ողբերգության» ձեռագրե-
րը ներկայացնելով՝ անհրաժեշտ է նկատել առաջաբանում արդեն կացնել հայագետներին,

⁷ Լուսանկարի մեջ «Թվին ՉԻԵ. Էրդանին» սկիզբը չի երևում, ուստի այն վերցնում ենք նախորդ
հրատարակումներից:

⁸ Ն. Գ. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 113-114:

թե «Գրիգոր Նարեկացիի «Մարեան Ողբերգություն» մեր ունեցած հնագույն օրինակը 1237 տարիէն է: Մեր միաբաններէն Ն. Յակոբոս Չամչեան, 1769 թուին, հեղափոխութեամբ եղած է ստանալու տպագիր օրինակի վրայ՝ Նարեկացիի Աղօթագրքին բնագրի տարբերակները, սակայն դիւանական նամակներէ կարելի չէ եզրակացնել թէ փափաքը կատարուած է, և այսօր Ս. Ղազարի մէջ չունին[ք] նման հատոր: Այս ուղղութեամբ ունինք ուրիշ վկայութիւն մը, գրուած Պոլիսէն, Ն. Արսէն Բագրատունիի գրիչով՝ որ կըսէ. «Լուայ թէ վարդապետը ոմն ի Նարեկայ վանիցն բերեալ է այս գեղեցիկ նորին ինքեան Գրիգորի Նարեկացոյ *գԱղօթագիրսն*, իբրեւ հրաշագործելով՝ նպաստ ժողովել վանացն: Պարմնցի և Ն. Գեորգեայ (Նիւմիզեան). կամ եւ, կամ նա՛ականապէս՝ եղեալ գրեցոր (25 մայիս 1833, առ Սուրբիա Արքայ): Բայց որովհետեւ նոյն տարիներուն կային համայնքային խնդիրներ, դժուարին կրկնայ մօտենալը Ձեռագրին, ու Ն. Բագրատունի այս առնչութեամբ կը գրէ Արքեպիսկոպոսին թէ Աստուածաշունչի տպագրութեան համար կը փափաքի ձեռք բերել Ձեռագիր Աստուածաշունչ մը, բայց յաջողելու համար կը խնդրէ Արքեպիսկոպոսին հրամանը. «Կամէի գիտել թէ հա[ւ]նիցի՞ք արդեօք մօտ և ել առնել մեզ երբեմն առ բարեբարոյս ոմանս ի վարդապետաց և յամիրայից Նայոց. յայնժամ թերեւս յաջողեցի ինչ, որպէս և տեսութիւն Նարեկեան ինքնագիր Աղօթամատուցին, որ երկիւղածութեան աղագաւ չաջողեաց մինչև ցայժմ» (10 Յուլիս 1833): Յաջորդաբար լռութիւն է այս ուղղութեամբ»⁹:

Այս համառօտ վկայություններում բազմաթիւ առեղծելի իրողություններ կան, որոնց, ինչպէս երևում է, Մխիթարյան երախտաշար հայերը Ն. Յակոբոս Չամչեանից (1769 թ.) մինչև Ն. Արսէն Բագրատունի (1833 թ.) և Ն. Սահակ Ճեմճեմյան (1996 թ.) չեն հաջողել հանգամանորէն տեղեկանալ: Բայց որ նրանք լիովին գիտակցել են Նարեկացու ինքնագրի գոյության բացառիկ նշանակությունը հայագիտության համար՝ ակնհայտորէն պարզ է թեկուզ այն փաստից, որ հետեւել են պոստահայ միջավայրում շրջանառող լուրերին և այդ մասին տեղեկացրել արքեպիսկոպոսին ու «առ բարեբարոյս» (իմա՝ շահեկան առիթներով) հայ ուղղափառ վարդապետներին ու ամիրաներին մօտ «եւ ու մօտ առնելու» արարողություն խնդրել:

Մինչ բուն խնդրին անցնելը, ասեմք, որ «Յուցակի» համաձայն Մխիթարյան մարեանադարանն ունի Գրիգոր Նարեկացու երկերի 32 միավոր («Յուցակի» 499 էջից մինչև 606 էջը, ըստ համարակալումի՝ 1029-ից 1061 ձեռագրերը), որոնց մեջ հնագույն օրինակը գրված է 1237 թ. Սկևռայում և հավաքածո է մուտք գործել 1963-ին Փարիզից՝ իբրեւ նվեր Ժակ Մաթևոսյանից (նկարագրությունը տես «Յուցակ», ձեռ. N 1029, էջ 499-508): Հաջորդը գրված է 1299 թ. և հավաքածո է մուծվել 1791 թ. առաջ, բայց «Մարեան...» չի բովանդակում¹⁰:

Այժմ անցնենք արծարծված խնդիրների լուծմանը.

1. «Մեր միաբաններէն Ն. Յակոբոս Չամչեան, 1769 թուին, հեղափոխութեամբ եղած է ստանալու տպագիր օրինակի վրայ՝ Նարեկացիի Աղօթագրքին բնագրի տարբերակները...»:

Վարսահաբար Կ. Պոլսում պաշտոնավարող Ն. Ն. Չամչեանը պոստահայ գրագետներ-

9 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մարեանադարանին Մխիթարեանց ի Վենեթիկ», հատոր 2, Պարմագիրք Նայոց – Կանոնագիրք – Գրիգոր Նարեկացի – Ներսէս Շնորհալի – Ներսէս Լամբրոնացի – Աղօթագիրք: Յօրինեց Ն. Սահակ վրդ. Ճեմճեմյան, Վենեթիկ, Ս. Ղազար, 1996, էջ ԱԲ:

10 Տե՛ս անդ, սյունակ 507-512:

րի միջավայրում շրջանառող լուրերից տեղեկացել է, որ Գասպար ամիրա Մուրադյանցը նախաձեռնել է Կրուց անապարի առաջնորդ Կարապետ վարդապետին հասցեագրված թուղթ է ուղարկել՝ «զի առաքեսցէ զոմն հանճարեղ յերկիրն Մոկաց՝ առ ի գրանել զձեռագիրն երանելոյն Գրիգորին Նարեկացոյն, եւ անորի սրբագրեալ զՆարեկն սուրբ յղիցէ մեզ»¹¹: Այդ «ոմն հանճարեղ»-ը եղել է Կրուցի միաբան Տակոր վարդապետը, որը «արագ արշամամբ Մոկս է» հասել, գրել Քավոյանց վանքում պահվող «լուսածրար քուփը» եւ որովհետեւ «ծիր յիշապակի» չի ունեցել, թե վստահաբար Նարեկացու ինքնագիրն է, ապավինել է ձեռագրի գործած հրաշքին, զգաստությամբ ձեռնամուխ է եղել նրա համեմատությանը իր ունեցած քապարի հետ եւ «գաւելորդ պարապապար կէտիք պնդեցի եւ գթերիսն լուսանցսն ծիրաձիգ նշանաւ արձան կացուցի», այսինքն՝ ընդմիջարկումները շրջակեպերի մեջ է առել, իսկ ինչ պակաս է եղել քապար օրինակում՝ արձանագրել է լուսանցում¹²: Տակոր վարդապետի այս աշխատանքի լուրն է, որ մահերեսի Գրիգոր ամիրայի սրացած ձեռագրական նյութերի հետ հասել է Կ. Պոլիս ճիշդ նույն 1769 թվականին եւ «ի լրոյ» հայրնի դարձել Տ. Չամչյանին: Ինչպես երևում է, նյութերին ծանոթացած «ոմանք բանիքուն անձինք» մինչեւ 1774 թ. «Գիրք աղօթիցի» հրատարակությունը չեն կամեցել Մխիթարյան հայերի հետ կիսել Ս. Գրիգոր Նարեկացու «լուսառ բանքի» ինքնագրի հայրնաբերման ուրախությունը:

2. *«Լուայ թէ վարդապետ ոմն ի Նարեկայ վանիցն քերեալ է այսր զՁեռագիրն ուրիսն ինքեան Գրիգորի Նարեկացոյ զԱղօթագիրսն, իբրեւ հրաշագործելով՝ նպաստ ժողովել վանացն»:*

Շար գարմանալի է, որ Տ. Արսեն Բագրատունին՝ Մխիթարյան խաչագույն հայագետներից մեկը, «Աղօթագրքի» 1774 թ. հրատարակության ծանոթ չէ մինչեւ նամակի գրության փաթիլն՝ 1833 թ., այլպես նրա առաջաբանից ու ծանոթագրություններից կտրելեկանար, թե ով է այդ «վարդապետ ոմնը» եւ ինչ է կատարել: Որ իրոք այդպես է, երևում է ոչ միայն «լուայ»-ից, այլ նաև նախադասության ավարտամասից՝ «իբրեւ հրաշագործելով՝ նպաստ ժողովել վանացն»: Սա Տակոր վարդապետի նամակի այն դրվագի արձագանքն է, ուր իր աչքերի փեսածին չհավաքացող վարդապետը ձեռագրաբար փրկում է «ի քուն թախծողին», որի անդամալույծ դուստրը հրաշքով ուրբի է կանգնում եւ «բան ի լեզուին» դառնում: Տ. Արսեն Բագրատունու լսած հրաշագործության դրվագը այսպեղից է քաղված, իսկ դրանով «նպաստ ժողովել վանացն» արտահայտությունը կաթողիկե հոր յուրովսան մեկնաբանությունն է:

3. *«Մեր միաբաններէն Տ. Յակոբոս Չամչեան, 1769 թուին, հեղամուր եղած է սրանալու քապար օրինակի վրայ՝ Նարեկացիի Աղօթագրքին բնագրի քարեքանդակը...»:*

«Նարեկի» 1774 թ. հրատարակության «Բան առ բարեմիս ընթերցող մարենիս»՝ առաջաբանից, Տակոր վարդապետի «Առ երջանիկ տէրդ իմ եւ հայր Կարապետ մաքրագան վարդապետը» թղթից անցողարձին ժամանակակից ու մասնակից, Իսկյուրարի Ս. Խաչ

11 ՄՄ ձեռ. թ. 5037, էջ 162թ.:

12 Այս առաքելության եւ կատարված աշխատանքին վերաբերող բոլոր աղբյուրների հավաքական հավելվածային հրատարակության մասին փնտռելով «Նարեկի» հեղինակային ինքնագիրը եւ անդրանիկ գիտական հրատարակությունը՝ աշխատության վերջում (**Պարոյր Մուրադեան**, Կովկասեան մշակութային աշխարհը եւ Նայաստանը, պրակ Ա, Եր., 2008, էջ 260-289):

եկեղեցու սարկավազ Մարտիրոս վարժապետի վկայություններից¹³ կարելի է հստակ պարկերացում կազմել Նարեկացու նորահայր հնագույն ձեռագրերի ընթերցումները գրառելու եղանակի մասին: Նակոր վարդապետը ոչ թե ամբողջությամբ ընդօրինակել - արձագրել է այդ ձեռագրերը, այլ դրանք համեմատել է «Աղօթագրքի» (իմա՝ «Նարեկի» նախորդ հրապարակություններից մեկի) հետ և լուսանցներում արձագրելով փարքերացումները, ինչպես այսօր սովորաբար մենք ենք անում: Նամոզվելու համար, որ բնագրեր համեմատելու այդ եղանակը նոր ժամանակների հայրնագործություն չէ՝ կարելի է վստահանալ նույն Ն. Արսեն Բագրատունու օրինակով: Նա 1824 թ. Փարիզ էր մեկնել «յարկապես 1254 թ. Ագաթանգեղոսի ձեռագրի փարքերացումները սրանալու համար, ինչը որ կարարած է «նշանակելով փրկագիր օրինակի մը վրայ»¹⁴:

4. Մեր օրերում դժվար հասկանալի պիտի երևա Ն. Արսեն Բագրատունու դիմումը Աբբահայր Սուքիաս արքեպս. Սոմայանին (1824-1846) *«հառակիցի՞ր արդեօք մնուր եւ ել առնել մեզ երբեմն առ բարեբարոյս ոմանս ի վարդապետաց եւ յամիրայից Նայոց. յայնժամ թերեւս յաջողեացի ինչ որպէս եւ րեւութիսն Նարեկեան ինքնագիր Աղօթանապոսին...»*:

Պարկերացնելու համար, թե ինչ հանդուգն խնդրանք է այս, կարելի է դիմել ԺԸ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում հայ լուսավորչական և կաթողիկե համայնքների միջև փրկող դավանական կացությանը, երբ Զաքարիա պարթիարք Կաթվանցին «հռովմեական հայոց» հեղինակություններին արքունիքի ձեռքով թիպարարության դատապարտելով փվեց, իսկ վերջիններս գերմանացիների առաջ պարթիարքին ամբաստանելով՝ պաշտոնից հեռացնելով փվեցին նրան¹⁵:

5. Կպուցի միաբան Նակոր վարդապետը «օղաչու բանին»՝ Կարապետ վարդապետին, անցնելով «սասկաձիգ լեռնասարան փապարս կորդ կորդաց սարսռարես դժնեայ բարկուրեաց սոր ի սոր սահուր խոշոր ռահի» հասնում է Մոկս և «ի խորս խուզեալ ի հարուստ պարմութեանց յառնողութենէ նախնեա ի երկարկեն հաւուց» հարցովործ անելով գրնում է Նարեկացու «լուսածրար» ձեռագիրը, որի հիմամբ հայոց փրկագիր գրականության մեջ առաջին անգամ կազմված է այսօր «քննական» կոչվող բնագիր, որ կրում է 1774 թվականը: Թե ուրիշ ինչ երախտիքներ է ժառանգել հաջորդ սերունդներին Նակոր վարդապետը՝ չգիտենք: Ժամանակակիցները, սակայն, արձանագրում են, որ «այս փեր Յակոր վարդապետ գկնի քանի ինչ ամաց ի վկայութիւն ճշմարտութեան սուրբ հաւաքոցս, դառն փանջանօք եւ սրախողխող կտրանօք ի Տիգրանակերպ նահապակեալ կարարի եւ երկնային ճառագայթաւեր լուսոյ ի վերայ սուրբ մարմնոյն իջմամբ փառաբերի նորին՝ յանհաւարից ագամ քարոզի: Որոյ յիշարակն օրհնութեամբ եղիցի եւ աղօթիւք նորին փերն ամենախնամ մեզ ողորմեսցի»:

Թե սպուգապես երբ է փռելի ունեցել «Նարեկի» ինքնագիրը հայրնաբերողի նահապարկությունը, չգիտենք: Սակայն պարզ է, թե «կտրանօք ի Տիգրանակերպ» մահը եղել է

13 Նրանք բոլորը ներկայացված են մեր վերոնշյալ հոդվածի հավելվածներում, էջ 271-289:

14 Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռ. 2422, փեն «Ցուցակ...», Զ, էջ ԺԶ:

15 Ընդ որ այս դրվագով է սկսվում Ավետիս Բերբերյանի «Պարմության Նայոց»-ը (փեն Բ հրապարակություն, Մ. Էջմիածին, 2009, էջ 33-35):

1807 թվականից առաջ, քանի որ այդ մասին խոսվում է «Գիրք աղօթից»-ի 1807 թվականի հրապարակության վերջում (էջ 501): «Նայոց նոր վկաների» երկհարորդակում Նակոր վարդապետը, ցավոք, վկայաբանություն չունի:

6. Մերօրյա նախնականները վերոհիշյալ իրողություններին կարող էին վերահասու լինել՝ հանգամանորեն ծանոթանալով «Գիրք աղօթիցի» 1774 թ. հրապարակության առաջաբանին ու բուն «Մարեանի» բնագրի ընթերցումները ուշադրության առնելով: Նամաձայնվենք, թե այդ մեկը կամ մյուսը վրիպել է ուշադրությունից, ինչո՞ւ լռության մատուցել հանգուցյալ դոկտ. Շուշանիկ Նազարյանի «Գրիգոր Նարեկացու «Մարեան ողբերգության երկի ինքնագրի հարցի մասին» հարցադրում կարարող հոդվածը¹⁶: Կարծում եմ՝ այս դեպքում գրելիք բացառություններից մեկն այն է, թե 61 ձեռագրերի համեմատությամբ 1985 թ. կազմված բնագիրը սպառում է բնագրական վերականգնումների հնարավորությունը: Դրան մոդոլ հիմնավորումներից մյուսը այդ նույն հրապարակության մեջ նախորդ հնարիսկ պայագրություններին պրված ընդհանրացող գնահատականն է, ըստ որի «պայագիրները հիմնականում ոչ թե բնագրային նոր պարբերություններ են ի հայտ բերում, այլ գլխավորապես, պայագրական վրիպակներ»¹⁷: Աշխատասիրողները ուշացումով նկատել են այս եզրակացության խստությունը և արձանագրել, թե «1774 թ. հրապարակությունը բնագրագիրական նվաճում էր, թերևս ամենակարարալը հայ մարենագրության հուշարձանների հին պայագիրների մեջ»¹⁸: Ինչպես երևում է, վեց տասնյակ ձեռագիր համեմատյալ հանգուցյալ աշխատասիրողները այլևս ժամանակ չեն ունեցել ըստ ամենայնի համեմատության առնելու մեզ զբաղեցնող հնարիսկը կամ եթե իսկ արել են այդ աշխատանքը՝ ավստացել են իրենց քրեանջան աշխատանքի արդյունքը գեթ մասամբ կասկածի ենթարկել:

Տիկին Շ. Նազարյանի հնչեցրած կոչը կարարվել էր 1985 թ. հրապարակությունից երկու տարի ուշացումով և բնագրի վերլուծության վրա չէր կառուցված:

7. Անթիլիասի 2003 թ. «Նազարամեակի հրապարակությունը» ձեռագրերի աշխարհ ջմբավ, գոհացավ հիմնականում Արար. արք. Թրթոյանի 1986 թ. հրապարակությունը խմբագրելով, նկատի առնելով նաև Երևանի 1985 թ. պայագրությունը: Նազարամեակից հետո ևս եղան ոչ քիչ հրապարակություններ, այդ թվում և բոլորովին վերջերս «Մարենագիրք Նայոց» շարքով լույս տեսած ԺԲ հատորը (Անթիլիաս, 2008): Նախորդ կազմող դոկտ. Ն. Թամրազյանը գիրք Նակոր վարդապետի առաքելության ու կարարած աշխատանքի մասին, չի մերժում, որ «Մոկաց գաւառում նա յայտնաբերել և ընդօրինակել է Գրիգոր Նարեկացու ինքնագիր Մարեանը և 1769 թուականին առաքել «Մարեանի» նոր հրապարակության նախաձեռնողին»¹⁹, բայց գերադասում է հարցը ջմանավորեցնել²⁰ և մեկ անգամ ևս վերահրապարակել Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի կազմած բնագիրը՝ իր ողջ ձեռագրացանկով ու քողարակի այլընթերցումներով:

8. Իհարկե, «Մարեան ողբերգութեան» ձեռագրական հիմք ունեցող ոչ մի հրապարա-

16 «Պարմա-բանասիրական հանդես», 1987, թիվ 4, էջ 104-112:

17 **Գրիգոր Նարեկացի**, Մարեան ողբերգութեան, աշխատասիրութեամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 224-225:

18 Անդ, էջ 205:

19 «Մարենագիրք Նայոց», ԺԲ հատոր, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 24-25:

20 Ուստի զանց է առնում այդ մասին խոսող հրապարակումները:

կություն շրջանցելի չէ, առավել ևս 61 ձեռագրի ընթերցումներ ամփոփող գիտական հրապարակությունը: Բայց չմոռանանք, որ ուզածդ քանակի ընդօրինակություններ ինքնագիր փոխարինել չեն կարող. նրանք արպացում են հուշարձանի ընկալման ու գնահատության հանգրվանները հեղադադարերում, իսկ ինքնագիրը հեղինակի կամքի ու կարողության չմիջամտված պարտն է, մինչդեռ եթե խոսքը վերաբերում է Նարեկացու անկրկնելի անհապականությանը, ապա ինքնագիր ձեռագիրը «ինքեան Նարեկացին» է, Ն. Գաբրիել Ավերիբյանի գնահատմամբ «գործ արդարեւ, որում գուցահասասար չէւ եւս գրեալ յայլ ազգս՝ պանծայ բարձր ի գլուխ...»: Բանի դեռ չի ապացուցված, թե «Նարեկի» 1774 թվականի հրապարակությունը ուշ շրջանի միջամտություններ ունի, իսկ նրա հետ կապված վկայությունները հերյուրված են, մենք պարտավոր ենք նախապարվությունը տալ Նարեկացուն եւ ոչ միջնադարյան գրիչներին ու սրագողներին:

Նակված ենք մտածելու, թե ի տարբերություն Մխիթարյան մյուս հայրերի, Ն. Գաբրիել Ավերիբյանը 1801-ին ծանոթ պիտի լիներ Ա. Պոլսո 1774 թ. հրապարակությանը²¹: «Առ ի գիտ հարագար իմաստից գրոց,- գրում է նա,- հարագարութիւն բնագրին է առաջին խնդրելի. նմին իրի ի լուծումն առնումք զբնագիր մարենիս ըստ օրինակին, որ *ի բազմապատիկ սխալմանց սրբեալ տպագրեցաւ ի Կոստանդնուպոլիս եւ ի մէնջ*»²²:

21 «Նարեկ աղօթից», Վենետիկ, 1801, էջ ԷԳ:

22 Անդ, էջ ԺԳ: Նույնը նաեւ 1827 թ. առաջաբանում, էջ Ժ: